ուստի նշվածի հաշվառմամբ Դատարանը գտնում է, որ հայցը ենթակա է բավարարման, քանի որ նշված հանգամանքների ապացուցման պարտականությունը կրում է պատասխանողը:

Իրավունքի պաշտպանության տեսանկյունից, Դատարանը կարևոր է համարում ընդգծել, որ հրավիրել է դատական նիստ և պատասխանողը պատշաճ ծանուցված լինելով դատական նիստերի ժամանակի և վայրի մասին չի ներկայացել, զրկելով նաև Դատարանին սույն վճռով նշված հանգամանքները Դատական նիստում պարզելու և գնահատելու հնարավորությունից:

<u>Դատական ծախսեր.</u>

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Տվյալ պարագայում հիմք ընդունելով այն հանգամանքը, հայցվորը վճարել է օրենքով սահմանված պետական տուրքի գումարը, իսկ սույն քաղաքացիական գործով հայցը ենթակա է բավարարման, Դատարանը գտնում է, որ պատասխանողից հօգուտ հայցվորի պետք է բռնագանձել 100.000 ՀՀ դրամ, որպես նախապես վճարված պետական տուրքի գումար:

<u>Եզրափակիչ մաս.</u>

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 188-189, 191-192, 198 հոդվածների պահանջներով, դատարանը՝

Վճռեց

Աննա Մարգարյան Ռուբենի Ա/Ձ-ի հայցն ընդդեմ պատասխանող՝ Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում ՀՄ-ի՝ «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կարիքների համար ԵԱՍՄԷԱՁԱՊՁԲ-24/20 ծածկագրով ցախավելների ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից 01.04.2023թ. թիվ 2 արձանագրությունով՝ «Աննա Մարգարյան Ռուբենի» Ա/Ձ-ի հայտը մերժելու և «Անդրանիկ Բաղրամյան Ռոմանի» Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել.

Անվավեր ճանաչել «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կարիքների համար ԵԱՍՄԷԱՁԱՊՁԲ-24/20 ծածկագրով ցախավելների ձեռքբերման նպատակով հայտարարված էլեկտրոնային աճուրդի գնահատող հանձնաժողովի կողմից 01.04.2023թ. թիվ 2 արձանագրությունով՝ «Աննա Մարգարյան Ռուբենի» Ա/Ձ-ի հայտը մերժելու և «Անդրանիկ Բաղրամյան Ռոմանի» Ա/Ձ-ին ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում ՀՄ-ից հօգուտ հայցվոր Աննա Մարգարյան Ռուբենի Ա/Ձ-ի բռնագանձել 100.000 ՀՀ դրամ, որպես պետական տուրքի գումար, 50.000 ՀՀ դրամ:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Digitally signed by
AMALYAN EDUARD

Վճիռը կամովին չկատարելու դեպքում կկատարվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարանին՝ հրապարակման պահից մեկ ամսվա ընթացքում:

Դատավոր՝ **Էդուարդ Ամալյան**

Digitally signed by
AMALYAN EDUARD
1203760221

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am